Հավելված
ՀՀ կառավարության 2022 թվականի
նոյեմբերի 24-ի N 1815-Ա որոշման

ՀԵՆԱՇԱՐԺՈՂԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ, ՁԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ/ՀԱՅՐԵՆԻՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՎՆԱՍՎԱԾՔ, ԽԵՂՈՒՄ ԿԱՄ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ ՁԵՌՔ ԲԵՐԱԾ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ ՀԱՐՄԱՐԵՑՎԱԾ ՏՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ

ՁԻՆՎՈՐԻ ՏԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ

Ձինվորի տան մասին 1
Խնդրի նկարագրությունը 2
Ծրագրի նկարագրությունը 2
Ծրագրի շահառուները 4
Ծրագրի նպատակը 4
Ծրագրի ժամկետները և բյուջեն 5

Ձինվորի տան մասին

«Ձինվորի տուն» վերականգնողական կենտրոնը հիմնադրվել է 2018 թվականին՝ «Աջակցություն վիրավոր զինվորներին և զինհաշմանդամներին» բարեգործական ՀԿ-ի (վերանվանվել է «Ձինվորի տուն» բարեգործական ՀԿ) կողմից՝ ՊՆ և ԵՊԲՀ հետ գործակցությամբ:

Կենտրոնն ամբողջական վերականգնողական համալիր է, որտեղ անվճար վերականգնողական բուժում են ստանում հայրենիքի պաշտպանության ժամանակ վիրավորում ստացած զինվորները: Վերականգնողական բուժմանը զուգահեռ զինվորական ծառայության ընթացքում վնասվածք, խեղում կամ հիվանդություն ձեռք բերած անձանց (այսուհետ՝ կազմակերպության շահառու) համար իրականացվում են սոցիալական, կրթական, մշակութային, ժամանցային բազմաթիվ ծրագրեր, լուծվում են շահառուների աշխատանքի, սոցիալական վերաինտեգրման խնդիրները: Կենտրոնը մինչ այսօր ամենատարբեր ծրագրերի շրջանակում սպասարկել է 5000-ից ավելի շահառուի:

Հենաշարժողական խնդիրներ ունեցող, զինվորական ծառայության/հայրենիքի պաշտպանության ժամանակ վնասվածք, խեղում կամ հիվանդություն ձեռք բերած անձանց համար հարմարեցված տների կառուցման ծրագիրը

ԶԻՆՎՈՐԻ ՏԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ

Խնդրի նկարագրությունը

2020 թվականի Արցախյան 44-օրյա պատերազմի ժամանակ բազմաթիվ զինվորներ ստացել են ծանր ողնուղեղային և գանգուղեղային վիրավորումներ, ունեն վերջույթների ամպուտացիաներ և այլ վնասվածքներ, որոնց հետևանքով ձեռք են բերել հենաշարժողական խնդիրներ: Հայաստանի քաղաքային և գյուղական բնակավայրերի ենթակառուցվածքները, ինչպես նաև բնակելի շենքերն ու տները հարմարեցված չեն նրանց տեղաշարժին: Շենք-շինությունների զգալի մասը, այդ թվում՝ նորակառույցները, չունեն թեքահարթակներ, իսկ առկայության պարագայում պարզապես չեն համապատասխանում միջազգայնորեն ընդունված ստանդարտներին, ֆունկցիոնալ չեն:

Հենաշարժողական խնդիրներ ունեցող անձանց կարիքներին չեն համապատասխանում ոչ միայն քաղաքային և գյուղական ենթակառուցվածքները, այլև տների ու բնակարանների ներսի հարդարումը: Մասնավորապես, մուտքի և միջսենյակային դռները չունեն անվասայլակով տեղաշարժվելու համար համապատասխան բացվածք, հարմարեցված չեն նաև սանհագույցներն ու լոգարանները:

Հասկանալի է, որ վերը նշված վնասվածքներով շահառուները կենցաղում ունենում են բազմաթիվ խնդիրներ:

Ծրագրի նկարագրությունը

Վերը նշված վնասվածք ունեցող շահառուներ դիմել են մեզ՝ «Զինվորի տուն» բարեգործական ՀԿ, որպեսզի իրենց համար կառուցվեն հարմարեցված տներ: Զինվորի տան շահառուներն առաջարկել են կառուցել բնակելի տներ, որոնք լիովին կհամապատասխանեն հենաշարժողական խնդիրներ ունեցող անձանց պահանջներին:

Բնակելի տները նախատեսվում է կառուցել հետևյալ հասցեով՝ Կոտայքի մարզ, գյուղ Բալահովիտ, 7-րդ փողոց, թիվ 1/2 հողամաս: Ծրագրի շրջանակում նախատեսվում է կառուցել 8 մեկհարկանի առանձնատուն և 1 երկհարկանի կացարան, որոնք ամբողջությամբ հարմարեցված կլինեն տեղաշարժման խնդիր ունեցող անձանց կարիքներին:

Կացարանը նախատեսված է լինելու այն մարզաբնակ շահառուների (զինվորական ծառայության ընթացքում վնասվածք, խեղում կամ հիվանդություն ձեռք բերած՝ հաշմանդամություն ունեցող անձ ճանաչված կամ չճանաչված) համար, որոնք տևական ժամանակ մասնակցելու են կազմակերպության կողմից իրականացվող ուսումնական ծրագրերին և/կամ ամբուլատոր բուժում են ստանալու «Զինվորի տուն» վերականգնողական կենտրոնում: Կացարանը հնարավորություն կունենա միաժամանակ լուծել թվով 20 շահառուի կեցության խնդիր: Ինչպես բուժական, այնպես էլ կրթական ծրագրերն ունեն ժամանակային սահմանափակում, հետևաբար հնարավոր կլինի մշտապես ներգրավել նոր շահառուների՝ ապահովելով մեծ հոսունություն:

8 մեկհարկանի առանձնատները նախատեսված են լինելու կազմակերպության այն շահառուների համար, որոնք ունեն հենաշարժողական խնդիրներ և ցանկանում են ծրագրի իրականացման համար ներդնել 10,000,000 դրամ:

Համալիրը կլինի ամբողջությամբ կանաչապատ, կներառի այգի, հանգստի գոտի, մանկական խաղահրապարակ, մարզադահլիճ՝ նախատեսված հենաշարժական խնդիրներ ունեցող անձանց մարզումների համար:

Մարզադահլիճի առկայությունը կխթանի շահառուների առողջ ապրելակերպը, քանի որ հաշմանդամությունը, այն էլ երիտասարդ տարիքում, սահմանափակում է շահառուների ակտիվ կյանք վարելու հնարավորությունը: Մարզադահլիճում մարզումները մաս կկազմեն շահառուների վերականգնողական բուժման ծրագրի:

Կազմակերպությունը հողահատկացումից հետո կսկսի նախագծանախահաշվային աշխատանքները, կկազմվեն բնակելի տների կառուցապատման նախագծերը, կհստակեցվեն առանձնացվող տարածքների չափերը:

Ըստ գլխավոր հատակագծի՝ հողակտորը բաժանվելու է 2 հատվածի՝

1) առաջին հատվածում կառուցվելու են կացարանը, զրուցարանը, մարզադահլիճը, հանգստի գոտին.

2) երկրորդ հատվածը բաժանվելու է 8 մասի, որոնցից յուրաքանչյուրի վրա կառուցվելու է մեկ առանձնատուն: Համաձայն գլխավոր հատակագծի՝ ընդհանուր հողամասից յուրաքանչյուր տան համար սահմանազատված հողամասը՝ կառուցված բնակելի տան հետ միասին, կազմակերպությունը պարտավորվում է նվիրաբերել ծրագրի շահառուներին:

Ծրագրի շահառուները

Ծրագրի շահառու են հանդիսանում զինվորական ծառայության կամ հայրենիքի պաշտպանության ժամանակ վնասվածք, խեղում կամ հիվանդություն ձեռք բերած անձինք, որոնց վնասվածքը հանգեցրել է հենաշարժողական խնդիրների առաջացմանը:

Կացարանի շահառու են հանդիսանում կրթական ծրագրերի մասնակցող կամ ամբուլատոր բուժում ստացող՝ զինվորական ծառայության կամ հայրենիքի պաշտպանության ժամանակ վնասվածք, խեղում կամ հիվանդություն ձեռք բերած անձինք՝ անկախ հաշմանդամություն ունենալու հանգամանքից:

Ծրագրի նպատակը

Ծրագրի նպատակներն են՝

- ստեղծել հարմարավետ կենցաղային պայմաններ ու միջավայր ծրագրի շահառուների համար,
- բարձրացնել շահառուների կյանքի որակը, հնարավորություն տալ վարել ակտիվ կենսակերպ՝ նպաստելով զինվորական ծառայության/հայրենիքի պաշտպանության ժամանակ վնասվածք, խեղում կամ հիվանդություն ձեռք բերած անձանց սոցիալական վերաինտեգրմանը,
- ստեղծել հնարավորություն մարզաբնակ շահառուներին ունենալ կացարան մայրաքաղաքին մոտ՝ ուսանելու կամ ամբուլատոր պայմաններով տևական բուժում ստանալու ժամանակահատվածում:

Ծրագրի ժամկետները և բյուջեն

Ծրագրի նախագծանախահաշվային աշխատանքները նախատեսվում է սկսել հողհատկացումից անմիջապես հետո, դրանք կտևեն շուրջ 6 ամիս: Շինարարական աշխատանքները նախատեսվում է սկսել շինթույլտվություն ստանալուց անմիջապես հետո: Ծրագիրն ամբողջությամբ, ներառյալ՝ բարեկարգման աշխատանքները, կիրականացվի շինթույլտվություն ստանալուց հետո 4 տարում:

Յուրաքանչյուր տան համար նախատեսված է, նախնական հաշվարկով, շուրջ 40 մլն դրամ բյուջե: Կացարանի կառուցման և կահավորման համար պլանավորվում է ծախսել շուրջ 75 մլն դրամ: Ջրուցարանի կառուցման և տարածքի ընդհանուր բարեկարգման աշխատանքների համար անհրաժեշտ է շուրջ 35 մլն դրամ, մարզադահլիճի համար նախատեսվում է ծախսել 20 մլն դրամ: Ընդհանուր ներդրման չափը կազմում է շուրջ 450 մլն դրամ:

Նախաձեռնության իրագործման համար շահառուներից յուրաքանչյուրը պատրաստ է ներդնել 10 մլն դրամը:

Ջինվորի տունը պարտավորվում է իր պատճառով ծրագրի չիրականացման դեպքում ամբողջությամբ վերադարձնել շահառուների կողմից ներդրված գումարը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

25.11.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ